

ՀԱԿՈԲՅԱՆ ԼԻԱՆ (ԵՂՀ)

ՎԵՅՍԻԻ ԴԵՐԸ 17-ՐԴ ԴԱՐԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԵՐԳԻԾԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

16-րդ դարի 2-րդ կեսի և, հատկապես 17-րդ դարի հասարակական պայմանների զարգացմանը գուգընթաց, թուրք գրականության մեջ տեղի ունեցան բովանդակային մի շարք փոփոխություններ¹: Այս շրջանում Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող արտաքին և ներքին տարաբնույթ զարգացումներն ի հայտ բերեցին հասարակական մտքի զարգացման և գրականության մեջ նոր տրամադրությունների, գաղափարների առաջացման միտումներ: Գրականության մեջ լայն տարածում ստացան երգիծական մոտիվները, որոնք սերտորեն կապված էին անկումային տրամադրությունների հետ: Պոետներն իրենց ստեղծագործություններում երգիծանքին հատուկ մեթոդներով սկսեցին ավելի հաճախ սուր քննադատության ենթարկել կոնկրետ անձանց և երևույթները՝ քննադատելով երկրում տիրող ապօրինությունները և խարազանելով հասարակական արատներն ու բարոյական անկումը:

Գրականության նախորդ փուլը յուրօրինակ հող նախապատրաստեց երգիծանքի ժանրի վերելքի համար: Ավելի ցայտուն սկսեց ի հայտ զալ քննադատական ուղղվածությունը: 16-րդ դարում իր զավթողական քաղաքականության զագաթնակետին հասած Օսմանյան կայսրությունը արդեն 17-րդ դարում արտաքին պատերազմներում ոչ միայն չկարողացավ հասնել նախկին հաջողություններին, այլև բախվեց պարտության մեջ մյուսի ետևից կորցնելով նախկինում զրաված տարածքները: Ռազմական անհաջողությունները առաջ բերեցին տնտեսական բնույթի մի շարք խնդիրներ, որոնք զգացվում էին կայսրության տարբեր խավերի մոտ: Այս ամենը պատճառ դարձան նաև բողոքի զանգվածային

¹ Моллов Р., Теоретические проблемы восточных литератур. О некоторых ренессансных тенденциях в турецкой литературе, М., 1969, с. 100-107.

միջոցառումների և ապստամբությունների, որոնց ձևումն իշխանություններից պահանջում էր մեծ ռեսուրսների և ժամանակի վատնում:

Սակայն վերոնշյալ դեպքերը չկարողացան ազդել գրականության զարգացման վրա, այլ ընդհակառակը ի հայտ եկան նոր ուղղվածություններ և թեմատիկաներ: Մասնավորապես՝ առավել ակտիվացան երգիծական մոտիվներով ստեղծագործությունները, որոնք նկարագրում և ծաղրանքի միջոցով քննադատում էին երկրում տիրող իրավիճակը, իշխանությունների ապաշխարհությունը և այլն²:

Հատկապես մեծ հնչեղություն ստացան հասարակական մոտիվները: Թեպետ ոչ բոլոր գրողներին էր հաջողվում հասնել սոցիալական համընդհանուր գաղափարների արտահայտմանը, սակայն նրանցից շատերը (Օռիհի Բաղդադի, Վեյսի) կարողացան իրենց ստեղծագործություններում պատկերավոր կերպով ի հայտ բերել երբեմնի փառահեղ կայսրության անկումը, իշխող վերնախավի կամայականությունները, բարքերի արատավորումը և այլն:

Ժամանակի շունչն արտահայտող մի շաբք ստեղծագործություններին զուգընթաց՝ 17-րդ դարի թուրք գրականության մեջ իրենց ուրույն տեղն ունեն արձակագիր և պոետ Վեյսի (Փոկական անունը Սոլլա Ռովեյսբեն-Մեհմեդ՝ 1561-1628 թթ.) ստեղծագործությունները: Լինելով դատավորի որդի, հետագայում ինքն էլ կայսրության տարբեր նահանգներում դատավորի պաշտոն զբաղեցնելով, հեղինակել է պատմական արձակ ստեղծագործություններ, ինչպես նաև խրատական ստեղծագործությունների հեղինակ է: Քաջատեղյակ լինելով երկրում տիրող իրավիճակին՝ նա կարողացել է իր ստեղծագործություններում վեր հանել կայսրության մեջ տիրող հոռի բարքերը և նկարագրել երկրի իրական պատկերը:

Վեյսիին մեծ հեղինակություն բերեցին նրա «Երազատեսություն» (Խաք-նամե կամ «Վականամե» 1608 թ.) երգիծական պոեմը և հատկապես «Ստամբուլին ուղղված հորդորներ» (Նախիաք-է

² Смирнов В., Очерк истории турецкой литературы, Всеобщая история литературы, т. 4, СПб., 1891, с. 483.

Բորամբուլ³ հայտնի քասիղը (ներբող), որին էլ նվիրված է սույն հոդվածը:

Ստացինում Վեյսին նկարագրում է պետության մեջ տիրող անօրինական կարգերը: Հեղինակը օգտագործել է միջնադարում տարածված «տեսիլըների» ժանրը, որի շրջանակում կարողացել է նկարագրել հասարակության վերաբերյալ իր իդեալները և հանդես գալ իրականության քննադատությամբ: Այս ամենը նա համեմում է երգիծանքի ժանրի բնորոշ արտահայտչամիջոցներով: Կանխագուշակ երազներում հեղինակի առջև բացվում է մեծարգու անձանց հանդիսավոր հավաքույթը՝ Ալեքսանդր Մակեդոնացու զիսավորությամբ: Նրանց զրույցի նկարագրությունն էլ, որին պոետը մասնակից է դարձնում իր ժամանակակից սուլթանին, կազմում է պոեմի հիմնական բովանդակությունը: Սուլթանը գանգատվում է երկրի կառավարման դժվարություններից, որտեղ վերջ չկա հոգումներին և աղքատությանը, իսկ Մակեդոնացին նրան համաշխարհային պատմությունից «Աղամի ժամանակից սկսած»՝ բերում է ողբերգական օրինակներ և կոչ է անում իմաստուն և արդար դեկավարման⁴:

Պետական անկայունության վերաբերյալ գանգատները շատ ավելի սուր են հնչում «Ստամբուլին ուղղված հորդորները»⁵ բանաստեղծության մեջ, որը պոետը գրել է իր կյանքի մայրամուտին (1626 թ.): Այստեղ Վեյսին բացահայտ կերպով արտահայտում է իր բողոքը երկրում տիրող անօրինականությունների դեմ: Նա վրդովվում է բարբերի անկումից, կաշառակերության և պետական ունեցվածքի յուրացման բացառիկ աճից, պալատական ծառայողների դափաճանություններից՝ ընդհուպ մինչև վեզիրը՝ այս ամենի պատճառը տեսնելով «հավատը կորցնելու մեջ»: Հեղինակը կտրուկ կերպով, հաճախ սուր երգիծանքով զրպարտում է մեղավորներին երկրում ձևավորված անարդար կարգերի համար: Վեյսիի

³ Маштакова Е., Из истории сатиры и юмора в турецкой литературе (XIV-XVII вв.), М., 1972, с. 162.

⁴ Боролина И., Турецкая литература, Литература Востока в средние века, М., 1970, с. 429.

⁵ Маштакова Е., նշվ. աշխ., էջ 163:

բանաստեղծությունները վկայում են այն մասին, որ ընշագուրկ մարդկանց բացահայտորեն կեղեքում են, որ նույնիսկ սիփահիները ստանում են ապօրինի եկամուտներ և արդեն չեն մտածում պետության բարօրության մասին: Օրինակ 21-րդ բեյթում ասվում է.

*Çalışır bir tevikile sıfırdan kalmağa herkes
Fani bar aslanıub gider gazeye fi sebil Allah⁶*

*Յուրաքանչյուրը փորձում է ճարպկորեն խուսափել արշավանքից,
Իսկ հասարակ մահկանացուները ձիերին նստած մեկնում են սուրբ
պատերազմի՝ հանուն Ալլահ...*

Խարազանելով ոչ ճիշտ բարքերը՝ հեղինակը ատելությամբ է խոսում կաշառակեր պաշտոնյաների մասին, արգահատում է այն «մտավորականին, ով խոնարհվում է քանի առջև՝ նրանց համարելով Աստծո թշնամիներ»⁷: Նրանց մասին Վեյսին հետևյալն է ասում.

*Vezarat-i sadrine geçmiş oturmuş bir bölüm hayvan
Bu din-u devlete hizmet eder yokdur Abd-Allah⁸*

*Մեծ վեզիրների պաշտոնին բազմել է անասունների ոհմակը,
Նրանք չեն ծառայում պետությանն ու հավատին, երդվում եմ
Ալլահով...*

Պոետը սրտնեղում է, որ իմաստուն և գիտնական մարդիկ ապրում են կեղեքով աղքատության և նվաստացումների մեջ, իսկ «անքաղաքավարիներն ու սրիկաները» կաշառի միջոցով ավելի են հարստանում, ստանում բարձր պաշտոններ: Նրա կարծիքով ամենամեծ կաշառակերներն ու թալանողները, որ երկիրը տանում են կործանման, քաղաքային իշխանություններն ու գերազույն ռազմական

⁶ Բեյթերի օրինակները մեջբերված են Ե. Մաշտակովայի «Թուրք երգիծական գրականության պատմությունից (14-17-րդ դր.)» գրքում տեղ գտած օսմաներեն օրինակներից, էջ 217:

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում:

դատավորներն են: Այդ մասին խոսվում է 16-րդ, 17-րդ և 18-րդ բեյթերում:

Վեյսին բողոքում է, որ խոշոր զինվորականները և պետական պաշտոնյանները խաբեբաներ են և բալանչիներ, ովքեր չեն վախենում ո՞չ երկնային, ո՞չ էլ երկրային դատաստանից: Դառը հեգնանքով է գրում նաև դատավորների մասին.

*Kusat ahvalini dirsek ki mümkünkündür beyan etmek
Eğer hazırlıksız ise kadi efendi yançık Allah⁹...*

*Եթե հարցնես դատավորի գործերի մասին, ապա հեարավո՞ր է այն
նկարագրել,*

*Եթե բոլոր թշնամին (ոչ ընկերը) անձամբ պարոն դատավոր է, ապա
թեզ հովանավոր է (միայն) Ալլահ...*

Պետք պետության անկման և աշխարհում տիրող անկարգությունները պայմանավորում է հավատը կորցնելու փաստով, որի պատճառով էլ նա զգուշացնում է սուլթանին, որ վերջինս չվստահի մեծ վեզիրներին և չհետևի պալատական իշխանավորների խորհրդին նրանց անվանելով «հավատի և պետության թշնամիներ»¹⁰: Նրա ընսալատությունից զերծ չեն մնում նաև այն շեյխերը, ովքեր շեղվում են իրական ճանապարհից և բացահայտորեն վաճառում իրենց զիտելիքներն ու աղոթքները (նման միտք հանդիպում ենք նաև Ռուսի Բաղդադի մոտ): Ապա շեյխերին հակառակում է դերվիշներին, որոնց շարքին էլ դասում է նաև իրեն: 52-րդ բեյթում ասում է, որ «դերվիշները, ճանաշելով Ալլահի ճշմարտությունը, զլուխ չեն խոնարհում սուլթանի առջև, և նրանից անկախ են»¹¹:

Հեղինակը համոզված է, որ արատները պետք է բացահայտել հենց «մեղավորների աշքի առջև»: Այս հավաստումը ուղղորդում է նրան ամբողջ պոեմի ընթացքում: Դրա բնորոշումն ի հայտ է զալիս հենց սկզբից մայրաքաղաքի բնակիչներին դիմելու ժամանակ, որով էլ սկսվում է քասիղը: Վեյսին մեղադրում է ստամբուլցիներին

⁹ Նույն տեղում:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում:

անհավատության, անբարո արատներ ունենալու մեջ, որոնք կ պատճառ էին հանդիսանում բազմաթիվ դժգոհությունների համար¹²:

Վեյսին իր շուրբերով կ հնչեցնում է համոզիչ դատավճիռը. բանաստեղծությունը ամփոփվում է թուրքական հետևյալ ասացվածքով. «Զուկը զլիսից է հոտում» այդ կերպ առանց երկիմաստության ակնարկելով իշխող վերնախավին՝ որպես բոլոր չարիքների աղբյուր (27-րդ բեյթ):

Վեյսին իր ժամանակակից Օմեր Նեֆիի նման խիստ հարցադրում է անում սուլթանին (հեղինակի կարծիքով Աստծո առաջ մարդկանց համար միակ պատասխանատուին), թե ինչու են իշխանության զլուխ կանգնած անարժան մարդիկ և ոչ մի ելք չտեսնելով ստեղծված իրավիճակից դուրս գալու համար՝ դիմում է «Ստամբուլի որդիներին»՝ մեղավորներին հասցնելով Աստծո զայրույթը, սպառնում աշխարհի զալիք կործանմամբ: Նա սպառնում է սուլթանին հետևյալ բեյթով.

*Cekildi fetne çikmağı tutuştu büsbütün dünya
Niçে ullaşmasın ateş beğim İstanbulla her gah¹³*

*Դայթել է անհանգստության կայծը, և կրակը բռնկել է ամրող
աշխարհը,*

Տես, իմքե՛յ, հանկարծ կրակը չթափի Ստամբուլի զլիսին...

Իր ծավալով ոչ այնքան մեծ պոեմը (61 բեյթ) հագեցած է բազմաթիվ թեմաներով և զաղափարներով: Որոշ մտքեր կարծես առաջին անգամ են հնչում թուրք երգիծական գրականության մեջ, որոշներն են շարունակում են Վեյսիի նախորդների և ժամանակակիցների կողմից արդեն հնչեցրած զաղափարները: Այդ էր պատճառը, որ «Ստամբուլին ուղղված հորդորները» լայն տարածում գտավ ընթերցողների շրջանում: Ի դեպ այդ հանգամանքով է բացատրվում նաև տեքստի մի քանի

¹² 17-րդ դ. Ստամբուլում արհեստավորների շրջանում սկիզբ էր առել ապստամբությունների ալիք, նոր թափ էին ստացել նաև գյուղացիների դժգոհությունները:

¹³ Մալտակովա Ե., նշվ. աշխ., էջ 217:

տարբերակների առկայությունը, բեյթերի տարեր դասավորվածությունը և այլն¹⁴:

Քասիղը հետարրաշարժ է նաև ոճական քազմազանության առումով: Այսուեղան առկա են և՝ կյանքի մեծ փորձ ունեցող մարդու խորհուրդներ և հորդորներ, ում բարկացրել են հասարակության մեջ տիրող ապօրինությունները, և՝ ծաղը ու հեգնանք ուղղված անձնական թշնամու դեմ: Պատահական չե, որ Վեյսին 9-րդ բեյթում ասում է. «Հյուսել են խժոժությունների թակարդ և անվանարկել մեր անունը (հեղինակը իրեն է ակնարկում)¹⁵: Այս հաջորդում է հոետորական հրապարակային կոչ, որով փորձում է ընթերցողին այցացնել իր ընսադատությունների ճշմարիտ լինելը:

Այսպիսով, Վեյսին օսմանյան միջնադարյան գրականության մեջ զբաղեցրեց իր ուրույն տեղը, իսկ նրա՝ ժամանակի շնչով գրված վերոնշյալ ստեղծագործությունները համարեցին «Երգիծանքի դարաշրջանի» կարևոր գեղարվեստական ձեռքբերումների շարքը, որոնց վերլուծումը առավել ամբողջական է դարձնում ինչպես 17-րդ

¹⁴ «Իրազեկում Ստամբուլին», - այսպես է թարգմանել քասիղի վերնագիրը ուսու հայտնի արևելագետ Սմիրնովը՝ 17-րդ դ. թուրք գրողների ստեղծագործություններին նվիրված իր գրքում (տե՛ս էջ 157): Վերոնշյալ գրքում նա առաջին անգամ ուստերենով գետեղել է քասիղից մի քանի բեյթեր և որոշ ընսադատական նկատառումներ կատարել քասիղի արևմտաեվրոպական առաջին թարգմանությունների շուրջ (1770 և 1809 թթ., տե՛ս էջ 24-25): Հատկապես նա մատնանշում է Հ. Ֆ. Դիցին և Յ. Համմերին, ովքեր սխալ են մեկնաբանում Վեյսիի վերոնշյալ ստեղծագործությունը և ընդհանրապես պոետի գրական ժառանգությունը (տե՛ս Смирнов В., Кучибей Гомюрджинский и другие османские писатели XVII века с причинами упадка Турции, СПб., 1873., с. 14-17): Զ. Գիբբը նույնապես իր աշխատություններից մեկում հրապարակել է քասիղի բնօրինակի կրծառ տերսոր և անզերեն թարգմանությունը (տե՛ս Gibb E. J. W., A History of the Ottoman Poetry, Vol. I-IV, VI, London, 1900-1909, Vol. III, p. 214-218; Vol. VI, էջ 179-182). Վեյսիի մասին հիշատակություններ են արել նաև այլ հեղինակներ: Թուրք ուսումնասիրողներից հիշատակման է արժանի հատկապես Վ. Ս. Քոջաթյուրքը (տե՛ս Kocatürk Vasfi Mahir, Türk edebiyatı tarihi. Başlangıçtan bugüne kadar Türk edebiyatının tarihi tahlili ve tenkidi, Ankara, 1964):

¹⁵ Մալտակովա Е., նշվ. աշխ., էջ 165:

դարի օսմանյան հասարակության մեջ տիրող արատավոր բարքերի, այնպէս էլ երգիծական գրականության ընդհանուր պատկերը:

HAKOBYAN LIANA
(YSU)

**THE ROLE OF VEYSI IN THE DEVELOPMENT OF THE TURKISH
SATIRICAL LITERATURE OF THE 17TH CENTURY**

This article is devoted to the works of Veysi, one of the representatives of Osmanic satirical literature of the 17th century. Some examples of "Nasihate Istanbul" poem by Veysi are included in the following article. Their analysis illustrates the vicious customs present in the Osmanic society of the 17th century and brings forward the characteristic features of the Turkish satirical literature.